



ԱԶԱՏ ԽՕՄՔ

(ՄԲԱԹ 17 ՆՈՅԵՄ. 1906. ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ԱՐՄԵՆԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Անցած շաբաթ գիշեր Չիզինիայի թատրոնի մէջ Արմենեանները՝ մասնակցութեամբ մէկ քանի երիտասարդ սիրողներու, ներկայացուցին «Իրէմոնի վնագործը» «Հիւրը» և «Համբոյրը»: Այէքսանդրիացիներու համար ներկայացուած այս փիլէսոսները նորութիւններ էին. մենք որ վարժուած էինք Հայ բեմին վրայ տեսնել թրքական շատ անգամ անիմաստ և միշտ անարուեստ խաղերը ունեցանք ներկայացում մը որ կը համապատասխանէր թատրոնի իսկական գերին: Իսկապէս թատրոնը իր կրթիչ դերը կը կատարէ այն ժամանակ միայն երբ ներկայացուած խաղերը ընկերական կամ հոգեկան հարց մը կը նետեն մէջտեղ, կը ստիպեն մեզի որ վայրկեան մը կանգ առնենք անոնց առջև, մըտածենք և աշխատինք լուծում մը տալ:

Մեր հասարակութեան համար այդ կարգի ներկայացումները մասամբ անմարսելի են. ան անշուշտ ներկայիս աւելի հաճոյք կը զգայ թոյն-զաշուռնական և թրքական անիմաստ փիլէսոսներէն. բայց գիտակից դերասանները չեն ապահովաբար որ զոհացում պիտի տան այդ փափաքներուն. ժողովրդին հետէն չէ որ պիտի

երթան անոնք այլ զայն իրենց ետեւէն պիտի տանին որքան ալ որ դժուար ըլլայ այդ՝ ս'յգրի օրերուն:

Ներկայացուած խաղերուն մէջ իր կարեւորութեամբ առաջին տեղը կը բռնէր անշուշտ «Հիւրը», որ ընտանեկան ծանր խնդիր մը կը հանէր բեմ: Կին մըն է խաղին հերոսը. Յլօրիզէլ, որ երիտասարդական շրջանի յատուկ ինքնամոռացման մէկ վայրկեանին ինկած է Տօն Ժուռանի մը թակարգը. բայց այդ զէպքը չէ արգիլած զինքը կազմել երջանիկ ընտանիք մը ամուսնանալով պատուաւոր երիտասարդի մը հետ, որուն վրայ կեդրոնացուցած է իր ամբողջ գորովը: Սակայն ամուսինը երբ օր մը պատահմամբ կը անդեկանայ իր կնոջ անցեալի այդ սխալին, սաստիկ բորբոքած առաջի ըսպէին կուզէ տնէն դուրս նետել զայն բայց իր կատարելիք անիրաւութեան վրայ անցրագանալով կը համաձայնի կնոջը մնալուն եղածը համարելով «անելանելի դժբաղդութիւն» մը Պրանտէս իր այս փիեւով բեմ կը հանէ ընկերակն կարեւր հարց մը որուն առջև ամէն խորհող մարդ ստիպուած վայրկեան մը կանգ պիտի առնէր: Հեղինակը Յլօրիզէլի պատահած դժբաղդութիւնը համարելով հանդերձ «անելանելի» չի ձգեր որ ընտանիքը քայքայուի այդ պատճառաւ, չի ձգեր որ այր ու կին բաժնուին իրարմէ: Բայց Պրանտէս իր այս համակրելի վճիռին ուժը կը սկարացնէ ամուսնուն բերանը զնկելով այնպիսի խօսքեր վերջին վայրկեանին, որոնք բաց դուռ մը կը թողուն ապագայ ընտանեկան անհամաձայնութիւններու որոնց պատճառ պիտի ըլլայ նորէն այդ «անելանելի դժբաղդութիւնը»:

Յլօրիզէլի ամուսինը իբրև մարդ պէտք էր որ ներքեր առանց ու եւ է վերապահումի. երիտասարդական սխալի մը համար մէկու մը ամբողջ կեանքը թունաւորել բարոյական գործ չէ ամէն պարագայի մէջ եւ

հերկարը ա. գ սխալին մէջ է որ կ'իյն ւոյ և ազդ պատ-
ճառով ալ խաղին ամենէն անմաքուր թիփն է որ կը
ներկայացնէ:

Ներկայացումը տնցու շատ ցածր, իսկ Տիկին
Դուրեան-Արմենեան կզաւ օրօւայ հերոսը Եթէ ուզե-
ինք շեշտել իր գլխաւոր առաւելութիւնները պիտի ը-
սէինք թէ յարգելի աիկինը շատ լաւ ուսումնասիրած
էր իր դերը, շարժումները, միմիքը շատ բնական էին,
արտասանութիւնը յստակ և մաքուր, իսկ թէ ի՞նչ ըզ-
գացումով էր որ կը խաղար աիկինը պէտք էր տեսնել
զաղափար մը կազմելու համար. ոչինչ չկար արուես-
տակեալ, բացի թերեւ այն տեսարանէն ուր սաստիկ
յուզուած Ֆլորիդէլ իր մաղձը կը թափէր երիտասարդ-
ներու դէմ. այլապէս միայն զգացումներու ծայրայեղ
ուժգնութիւնը խանգարեց վայրկեան մը աիկինով խա-
ղին բնականութիւնը:

Պ. Արմենեանի դերը պէտք է խոստովանիլ շատ
տպերախտ դեր մըն էր. այդ դերին մէջ չէր անշուշտ
որ ինքը իր կարողութիւնները պիտի փայլեցնէր: Ար-
մենեանի ուսերը շատ ուժեղ են աւելի զժողար դերեր
ստանձնելու համար և այդ պատճառով է որ չենք ու-
զեր իր մաւին երկար խօսիլ, իր ցոյց տուած կարո-
ղութիւնները որքան ալ փայլուն ըլլան մեզի համար,
մենք պիտի փափաքէինք զինքը տեսնել աւելի բարձր
ու զժողար դերերու մէջ և վստահ ենք որ այնտեղ պի-
տի գտնենք ամբողջ Արմենեանը և այն ժամանակ պի-
տի կարողանաք խօսիլ իր կարողութիւններու մա-
սին:

Մեր այս փոքրիկ տեսութիւնը չենք ուզեր վեր-
ջացնել առանց շնորհաւորելու այն երիտասարդ սիրող-
ները որոնք իրենց մասնակցութեամբը կարելի ըրին
չարաթ գիշերուայ ներկայացումին յաջողութիւնը:

Յ. Ա.

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ԾՆՈՒՆԴԻ ԻԺԻՑ»-Ի ԱՌԹԻՒ

(Շար. 26րդ թիւէն և վերջ)

Փարիսեցիք կը հաւատային Մովսէսէն սկսեալ մինչև իրենց ժամանակին, հազար հինգ հարիւր (1500) տարուան բոլոր բերանացի ու գրաւոր աւանդութիւններու, և մնչեռանդօրէն նշւիրուած էին այդ աւանդութիւններու պահպանումին, կը հաւատային մեռելոց յարութեան ու հանդերձեալ կեանքին, կը հաւատային հոգիներու եւ հրեշտակներու գոյութեան. ու միջնադարեան կաթողիկ կղերներու նման բոլորանուէր ոչտով յարած էին այն վարդապետութեան թէ ճնպատակը կ'արգարացնէ միջոցը» Թէև արտաքին երևոյթով բարեպաշտութիւն եւ սրբութիւն կը կեղծէին մեր ներկայ կղերականներու շատերուն նման, սակայն ներքնապէս ապականուած էին. նենգամիտ, կեղծաւոր, շարաքարոյ ու բարոյապէս ինկած ու փճուցած էակներ էին. ասոնք իժերու նման իրենց թոյնը կը թափէին ամէն բարի ու նուիրական գործերու մէջ: Յիսուս իր խստաթափանց աչքով սերտած էր անոնց ներքին կեանքը ու գիտէր այս ամէնը՝ գիտէր նաև թէ ինչպէ՞ս նոյն այս Փարիսեցիները դեռ հազիւ քանի մը շաբաթներ առաջ իր կեանքը վերջացնելու համար դաւեր սարքած էին իր գէմ:

ուստի երբ եկան ու մօտեցան իրեն զինք հար-
ցափորձելու, այ եւս չկրցաւ զուպել իր արդար
զայրոյթը, այդ կեղծիքի ու ապականութեան
մարմնացումին դէմ, ու ինչպէս որ անգամ մը
խարանամ էր զանոնք « կե՛ղծաւոր » մակդիրով,
այս անգամ ալ կը գործածէ անոնց դէմ « ժը-
նունդք իժից » բառերը, նոյն ձևաբանութիւնը որ
Յովհաննէս Մկրտիչ գործածած էր իրմէ առաջ՝

Ընդունելով հանդերձ սակայն թէ Յիսուս,
ինչպէս նաև Յովհաննէս, « ծնունդք իժից » ձևա-
բանութիւնը գործածելով նախատած ու անար-
գած են նախատիների ու անարգանքի սկզբունքը
կամ անոր պէտքը, պէ՞տք է սակայն եղբակացը-
նել թէ մենք և ս պարտինք հետևիլ Յիսուսի և իր
նախորդներուն այս օրինակին: Ո՛չ: Եւ ինչս՞է:

1.~ Որովհետև Յիսուս ու իր նախորդները,
մարգարէները, իբրև մարդ կրնայ ն սխալած ըլ-
լայ:

2.~ Որովհետև ինչ որ ներելի ու կարելի էր
Յիսուսի ու մարգարէներուն ժամանակ՝ այժմ
կրնայ ներելի ու կարելի չըլլալ միևնոյն բանը,
ուրիշ խօսքով ինչ որ կրնար օրինաւոր և վայել
նկատուիլ անոնց ժամանակ այժմ կրնայ նկատ-
ուիլ ապօրինի ու անվայել:

3.~ Եթէ Յիսուսի ու մարգարէներուն ապ-
րած դուրը ու միջավայրը այնպէս կը պահան-
ջէին, հիմա անկից ի վեր երկուքէն երեք հա-

զար տարիներ անցած ըլլալով վարքերը ու սովորութիւնները փոխուած են՝ ու ներկայ դարու ընկերական օ կնքները ու պայմանները նոյնը չեն ինչ որ էին Յիսուսի ու մարգարէներուն ժամանակ:

4.-Թող որ Պաղոս Յիսուսի առաքեալներէն էն կրակոտն ու ճարտասանը կը յորդորէ իր հետեւորդները «ամէն բան փորձել ու բարին ամուր բռնել» (Ա. Թեսաղ. ե. 21): Ինք՝ որ կը խրատէր ուրիշները ըսելով «ինչ նմանող եղէք ինչպէս եւ ես Քրիստոսի» (Ա. Կորնթ. ժա. 1), թէև անխրտիր կը հարուածէր ու կը յանդիմանէր նախնիքրիստոնեաները, սակայն երբէք չէր նախատէր, չէր անարդէր ու չէր հայհոյէր: Աթէնքի մէջ չը ծաղրեց Աթենացոց կրօնքները ու զանոնք յիմարներ շանուանեց կուռքեր պաշտելուն համար. Կորնթոսի, Եփեսոսի ու Հռովմի մէջ ինչպէս նաև Անտիօքի, Իկոնիոնի և Լիւստրայի մէջ (Ք. Տիմ. դ. 11) իր կրած հալածանքներուն ու անտանելի տանջանքներուն համար երբէք անճանորակումներով չպատասխանեց իր թշնամիներուն՝ այլ սիրով ու համբերութիւնով հետեւեցաւ իր դժած շաւղին և ընդգրկած սկզբունքին:

Արդ մենք ևս մաքառինք նախապաշարումներու, տգիտութիւններու և մոլեռանդութիւններու դէմ: Կուռինք բռնապետութիւններու, անիրաւութիւններու և զեղծումներու դէմ, հար-

ուածենք ապականեալ բարքերը, ճաղկենք իրենց հստակութեան բարձունքին վրայ թառող ամբարտաւան հոգիները, խայտառակենք հասարակութեան վարքերը ապականող ամբարիշտները և խթանենք ազգային ազատագրութեան դատին անտարբեր և հանրութեան շահուն ու բարիքին արգելք հանդիսացող անղգաները՝ ու սակայն առանց հայհոյելու, առանց նախատելու, առանց արհամարհելու և առանց այս ու այն մրոտելու: Ինչիկ մ'ալ եթէ կարելի է ջանանք փափկանկատութիւն ու քաղաքավարութիւն ունենալ մեր խօսքերուն, մեր գրութիւններուն ու մեր ուրիշներու հետ վարուելու կերպին մէջ:


Պէտք է յիշենք թէ սնտաի վիճաբանութիւններով և ուրիշներու նուիրական բաները արհամարելով չէ որ պիտի յաջողինք զանոնք մեզի համակիրներ կամ գործակիցներ ընել, այլ սիրով ու քաղցրութիւնով մեր գծած ծրագրի ու որդեգրած սկզբունքին գերազանցութիւնը ցոյց տալով անոնց: «Չարին յաղթել բարիով», այս է քրիստոնէութեան գլխաւոր սկզբունքներէն մին. «Ատելութիւնը երբէք չդադրիր ատելութիւնով բայց միայն սիրով» կ'ըսէ հնգկական առածը. գիտնալու ենք թէ ինչ որ ցանենք նոյնը կը քաղենք. եթո ատելութիւն ցանենք ատելութիւն կը քաղենք, եթէ սէր, սէր կը քաղենք:

Պէտք է գիտնանք թէ սէրը կեանքի բա-

նալին է, թէ սիրոյ ազգեցութիւններն են որ կը շարժեն աշխարհը. ըստ որում պէտք է ապրինք ամենուն համար սիրոյ խորհրդով և ապահով ըլլանք թէ պիտի գրաւենք ամենուն սէրը, իսկ եթէ ապրինք չարութեան եւ ատելութեան խորհրդով՝ աներկբայ ըլլանք թէ չարութեան և ատելութեան խորհուրդներ պիտի հրաւիրենք մեր վրայ: Պէտք չէ ուրեմն թոյլ տանք որ մեր մէջ ապրի ստորին միատումներու ու բնազդներու միջնադարեան մարդը, հայհոյող, անարգող, ատող, արհամարող, ստող, զրպարասող ու անիրաւող հին մարդը: Այլ պէտք է որ մեր կեանքը, մեր ընթացքը ու մեր գրութիւնները ճանրչնեն ընդհանրութեան խորագոյն ձգտում մը դէպի արդարութեան, մեծագոյն պատկառանք մը հանդէպ ճշմարտութեան և հզօրագոյն ճիգ մը բարիին նըկատմամբ»:

Վերջապէս պէտք է ապրինք մաքուր և նարատ կեանք մը, օգտակար և օրինակելի կեանք մը, և ընենք ու սորվեցնենք հանրութեան ամէն ինչ որ ուղիղ, ինչ որ ճշմարիտ, ինչ որ առաքինի և՛ բարի և՛ սուրբ է և՛ վսեմ:

Տօթթ. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ



ԵՐԵՎԱՆԻ

Շարժութիւնը իրիկուն Ձիզինիտ թատրոնին երեկոյթը ճշմարտապէս գեղարուեստական երեկոյթ մը եղաւ, որուն նմանը, կարելի է ըսել, չէինք տեսած Եգիպտոսի մէջ, տասը տարիէ ի վեր:

Ամէնէն դժուարհաճ ու նրբաճաշակ թատերասէրներն ալ առանց վերապահումի և առանց վարանումի գնահատեցին Տէր և Տիկին Արմենեանի բեմական կարողութիւնները:

Յաւալի է որ ուրիշ գերասաններու և ամաթէօրներու պակասը կարելի չընէր որ երկու տաշանդաւոր արուեստագէտները տեսնենք աւելի երկարաշունչ տրամի մը մէջ:

Արդեօ՞ք կարելի չէ որ շարժութ գիշերուան ներկայացումին համար կազմուած կարգադիր մասնախումբը մնայուն հանգամանք մը առնէ և Արմենեան ներկայացումներու շարք մը կազմակերպէ ձմեռնային եղանակին համար միւսնոյն ժամանակ հրաւիրելով Եգիպտոսի մէջ գտնուած մէկ քանի բեմական ուժերը:

Ձիզինիայի երեկոյթին ներկայ գտնուողներուն ընդհանուր փափաքն է այս:

ԺԱՄԱՆՈՒՄ

Այս երեքշաբթի առտու Մառտէլլի շոգենաւով Եգիպտոս հասաւ քաջանօթ գրագէտ և հը-

բապարակողիր Լեւոն Բաշալեան որ քանի մը տա-
րի անձնական գործերով կովկաս անցնելէ յետոյ՝
վերջերս Եւրոպոս վերադարձած էր:

Մեր բարեկամը առանց Ալեքսանդրիա կե-
նտրու, անմիջապէս մեկնած է Քահիրէ ուր իր
ծերունի մայրը, քոյրը և եղբայրը ստալ տարիէ
ի վեր իրեն կը սպասէին:

Կը լսենք թէ Լեւոն Բաշալեան բաւական
պիտի մնայ հոս:

ՏԵՂԱՓՈՆՈՒԹԻՒՆ

Քաղաքիս ծանօթ հայ փաստաբաններէն
տօքթ. Մ. Թէոփիլեան իր գրասենեակը փոխադ-
րած է Մահամէտ Ալիի հրապարակը, Մօնֆէ-
րաթոյի շէնքին մէջ, ուր պատրաստ է ստանձել
Խառն Գատարաններու վերաբերեալ ամէն տե-
սակ դատեր, օրինական գործողութիւններ և
պայմանագրութեանց պատրաստութիւն:

ԴՍՏ ՄԸ

Պօղոսեան վարէարանի հրատարեցուցեալ ու-
սուցիչ Տ. Մեսրոպ Նորատունկեան դատ պիտի
բանայ եղեր Հոգաբարձութեան կամ Խնամակա-
լութեան կամ Առաջնորդարանին, կամ Ժողովուր-
դին, կամ նախկին տնօրէններուն դէմ որոնք կը

համարի իր պաշտօնանկութեան պատասխանա-
տունները: Տ. Մեսրոպ Նորատունկեան կ'ամբաս-
տանէ զանոնք ըսելով թէ՛ իսկ գաւազրութիւն
մը կազմած են իրեն դէմ, զինքը պարզապէս
մեռցնելու շիլ՝ և թերևս՝ եղեռնական դիտաւո-
րութեամբ: Տ. Մ. Նորատունկեան իր ամբաստա-
նութիւնը հաստատելու համար առաջ պիտի բերէ
ձեռնհաս բժշկներու կարծիքը որոնք պատրաստ են
վկայելու թէ Տ. Մ. Նորատունկեան տասը երկար
տարիներէ ի վեր վարժուած ըլլալով Պօլոսեան
վարժարանի կլիմային և զրեթէ արմատ ձգած
ըլլալով այդ պարտարտ հոսին վրայ, զինքը հոնկէ
արմատախիլ հանելը պարզապէս դանդաղ, բայց
ապահով մահուան մը գատապարտել է: Բաց
աստի իր ոտքերն ալ տասը տարիէ ի վեր վար-
ժուած ըլլալով միմիայն Ապու Տարտար փողոցին
մէջ քալելու, բոլորովին անյարմար են քաղաքիս
միւս փողոցներուն մէջ ժուռ դալու, որով խեղճ
Մեսրոպ Նորատունկեան ստիպուած պիտի ըլլայ
ասկէ ետքը կառքով պտտիլ, ինչ որ նիւթական
ծանր կորուստ մըն է իրեն համար:

Այս հետաքրքրաշարժ գատը անշուշտ տե-
ղի պիտի ունենար Գահիրէ, Ապպասիէի Խառնա-
փնտոր գատարանին առջև, եթէ երեկուրնէ ի
վեր օդերը յանկարծ զովանալով բորբոքուած
երևակայութիւնները չհանդարտեցնէին:

ԾԻՄԱՂ

Պօղոսեան վարժարանին մէջ, կենդանաբանութեան դասի ատեն.

Դասատուն.~ Տղաս, ո՞րն է այն կենդանին որ թէ մեզի կը սնուցանէ, թէ կաթ կը մատակարարէ և թէ հագուստ կը հայթայթէ:

Աշակերտը.~ Հայրիկս, միւսիւ:

ԱՐՄԵՆԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Տ. Արմենեան, տաղանդաւոր արուեստագէտը, մտերս կը մեկնի Գահիրէ ուր դիտաւորութիւն ունի, յայտնուած փափաքներու համեմատ, ներկայացում մը կազմակերպել:

Վստահ ենք որ Տ. և Տիկին Արմենեան փայլուն յաջողութիւն մը պիտի ունենան եզրպտական ոստանին մէջ:

ԵԳԻՏՍԱՀԱՅ ԲԱՌՍԳԻՏՈՒԹԻՒՆ

Ժողովուրդը այսպէս կը պահանջէ.~ Իմ քէյֆս ասանկ կ'ուզէ:

Հարկ է սահմանադրութիւնը գործադրել.~ պէտք է զիս երեսփոխան ընտրել:

Հաշիւ կը պահանջենք.~ մենք ալ բաժին կ'ուզենք:

Յառաջդիմասէր ըլլալ.~ հարուստները շահա-
դործել:

Յանուն սկզբունք.~ Յանուն անձնականու-
թեան:


Ընդդիմախօսութիւն.~ հայհոյանք և նախա-
տինք:

Հաւատք, յոյս.~ Բամպակ, հող:

Գրականութիւն.~ Տատուր և Սիսակ Մու-
րատեան:

Պարկեշտ քաղաքութիւն.~ Լուսաբեր:

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ



(մեր մասնաւոր թղթակցէն) (1)

16 Նոյեմբեր 1906

Օգերը զովացան, ձմեռնային եղանակը ըս-
կսաւ և Գահիրէ վերստացաւ իր կենդանութիւնը:
Զբօսաշրջիկները գունդ գունդ կը սկսին հասնիլ
շարաթը քանի մը անգամ և մեծ օթէջներու առ-
ջև ոգեւորութիւնը հետզհետէ կ'աւելնայ:

Այս միջազգային կենդանութեան և գործու-
նէութեան քով մեր ազգային շրջանակին մէջն
ալ վերջին ասեմներս տեսակ մը անսովոր եռու-

(1) Այս թղթակիցը պէտք չէ շփոթել այն պատա-
հական թղթակցին հետ որ ասկէ առաջ, քանի մը ան-
գամ, պրած էր «Ազատ Խօսք»ի մէջ: Ծ. Խ.

զեռում մը կը տեսնուի:

Նորակազմ ընկերութիւններ և Միութիւններ ետեւէ ետե կը հաստատուին ու կը լուծուին, եգիպտահայ լրագիրներու նման:

Այս օրերս կազմուեցաւ նաև նոր ընկերութիւն մը «Հայրենասէր հայուհեաց ընկերութիւն» որուն անգամները պիտի ըլլան միմիայն տիկիներ և որիորդներ և որ նպատակ ունի գործնապէս օգտակար ըլլալ Հայ Յեղափոխութեան, նիւթական նպաստներ հասցնելով հայրենիքի մէջ կռուող մեր եղբայրներուն:

Կը մտզթենք որ այս ընկերութիւնը, որ այգֆա՞ն գեղեցիկ նպատակով մը կը կազմուի. շարժանանալ վաղամձօռիկ ընկերութեանց բախտին և կաշենայ իր ծրարիբը գործադրել հաստատ հիմերու վրայ:

Միթէ կարելի չէ՞ որ Ալեքսանդրիոյ հայուհիներն ալ նմանօրինակ քոյր ընկերութիւն մը կազմեն և միասին գործակցին:

Գոնէ թո՛ղ հայ կիները տան համերաշխ գործունէութեան օրինակը և գուցէ օր մը այգօրինակը իր բարի ազդեցութիւնը ի գործ գնէ Յեղափոխական անշատ մարմիններուն վրայ:

ՍԱԹԵՆԻԿ



New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՅՈ

ՆՈՐ ՎԻԲԹՈՌՈՒՍ ՕԹԷԼ Ազերաանդրիոյ Մօս
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒԱՆՍ Հալիթ թիւ 2

Առաջին կարգի օթել, մասնաւորապէս շինուած,
այժմուս բոլոր հանգստաւէտութեան պայմաններով:
Հիւանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր
ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքտր-
րական լոյս: ՉԱՒԱՒՈՒՄ ԳԻՆՆԵ ԹԵԼԵՓՈՆ թիւ 370: Հե-
տադրական հասցէ՝ Երև. Վերթուհի, Ռամիէ: Թոմսվա-
յով տասը վայրիկան Ալեքսանդրիայէն:

Ս. Ֆ. ՌԷՉԻԿ, ՏԵՕՐԷՆ

Յ. Գ. - Մասնաւոր դին կառուվարական պաշտօն-
ականերու և զինուորականներու համար: Բոլոր սեն-
նակները ծովուն վրայ կը նային:

Ս Ե Շ Ա Ս Թ Մ Ս Ն Յ Յ
ՕՐԱԿՐԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱՆ ԱՅՈՒՆԻՍՏԱՆ
Կ. ՆԱՆԱԻԿԵԱՆ
1330318
15 RUE STAMBOUL IS
ALEXANDRIE

Այս աշխատանքը ըզ կը պատրաստուին զոր
գրել և կրկն ցուի Քրիստոս Բառչուլ. Գրիկե
Ս. զգալով Արքեպ. արժաթի և սկիւ մտնելու մը:
Թանգաներ Ս. Միկելոսի և կալմանքովի
ժողովրդի գործեր:
Տարածական ամեն ստանդարտի նայ և ստոր
նշաններով. Հարանկան իրաւորները, այս-
տարներ. Նամակայրիներ. ստացողները. Կայն
արտեր. մանկաներ. Կայն զոր իրաւորներ. գրողներ Ստ
Մասնաւոր ինքնը առաջին և Տարածական. Ստ
Կար գին
Այս աշխատանքը ըրտապէս կը շանձարարներ
Ազերաանդրիոյ. Գանդիլ և բոլոր էլիպտուայ սպ
գանդ. Գանդիլիով թիւ նա կար բոլոր շանձա-
րարովիները ամենուան ինքնուով կը կատար
ուն և զոն կը կրկն ամեն գտարածան նա.
ունիներ
Ստոր գործարանները զիմիկ արող անկնչ
անկան զը այլիկն այն աշխատանքը:

«ԱԶՍԱ ԿՕՍԲ» ՉԵՌԻԷ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ
Ալեքսանդրիա՝ Տ. Յ.
Ղաղիկանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.
Թիկլալանի խանութը:
Գանդիլ՝ լրագրավաճառ
Տ. Հունիկի և Կօլտըն Քէօշ-
քի քով և «Լուսարեր»
Թերթի ցրուելին մօտ:
Նախորդ շարժուան
Թիւերը կը վաճառուին
կրկին զինով:

ZINCOGRAPHIE



HENERANAZARETHIAN
ALEXANDRIE. RUE STAMBOUL.

**HENER
NAZARETHIAN.**



RUE
STAMBOUL

ZINCOGRAPHIE

“ԱՋԱՏ ԽՕՄԲ”-ի Պայմանները

— ԱՋԱՏ ԽՕՄԲ - ԳԸ ՀԱՍՏԱՐԱԿՈՒՄ ԵՐԲԱՅ ՕՐԵՐԸ

Եզրկառոթ համար բաժնեկիցիէ է

40 ԲԻՆԸ	40 ՂՐԸ ՈՂՁ
20 ”	20 ” ”

Ա Ք Ս Ա Ս Ա Ղ Մ Ն

ԵՐՐՈՒՄ	40	ՅԻՒ	10	ՏՐԱՆԸ
ՌՈՒՍԻ	”	”	4	ՐՈՒՄԸ
ԱՄԵՐԻԱ	”	”	2	ՏՈՒՄ

Բաժնեկառոթութեան կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԸ 100,0

“ԱՋԱՏ ԽՕՄԲ”-ի համար լաճնիկին կամ
որ և է գրութիւն պէտք է ապրի 56-
տեկայ հասցէին”

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPT)

Մանրագրութեան կրկնաւանդի Լաւանուս
պարտեհներով

Պատասխանատու. Խարազիր Ե. ՕՏԵԱՆ

Տպ. Փոքր Դ ԵՂԱՐԿԻՃԱՆ. Ելեմանկիս